Lkn
√722

[1 9 99

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ

ՀՐԱՀԱՆԳ

ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Լեր
722

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ. ԳՐԱԴ.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1910

ԳՈՎՄԱՐԱՆԱԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Հրամանաւ

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

4 722-60

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՀՐԱՒԱՆԳ

ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ.

Ա. ԿԱԶՄԸ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.

1. Թեմական պատգամաւորական ժողովները կազմւում են թեմական պատգամաւորներից՝—երկու-երկու պատգամաւոր թեմի կեդրոնական ծխական եկեղեցիների կողմից, մի-մի պատգամաւոր թեմի միւս քաղաքների ծխական եկեղեցիների կողմից և մի-մի պատգամաւոր թեմի գիւղական գործակալական շրջանների։

2. Թեմական պատգամաւորներն ընտրւում են չորս տարի ժամանակով։ Հին պատգամաւորների լիազօրութիւնը շարունակւում է մինչև նոր պատգամաւորների ընտրութիւնը և պաշտօնի ձեռնարկելը։

3. Թեմական պատգամաւորների լիազօրութեան քառամեայ ժամանակամիջոցը լրանալուց երեք ամիս առաջ թեմի առաջնորդն իբրև նախագահ թեմական խորհուրդի, սրա համաձայնութեամբ որոշմամբ շրջաբերական է ուղարկում թեմի բոլոր գործակալներին, կարգադրելով ծխական և գործակալական ժողովները հրաւիրել, սրա-

տուլիրակներ (յօդ. 6) և թեմական պատգամաւորներ (յօդ. 5, 6) ընտրելու համար։ Շրջաբերականում նշանակուելու է գործակալական և թեմական պատգամաւորական ժողովների գումարման տեղն ու ժամանակը։

4. Թեմական պատգամաւորների ընտրութեանն իբրև ընտրող և ընտրելի մասնակցելու, այլ և թեմական կառավարութեան շրջանում պաշտօններ ստանձնելու իրաւունք ունին նոյն թեմի բոլոր իրաւասու թեմականները, այսինքն թեմի որ և է ծխական եկեղեցում առնուազն երկու տարի իբրև ծխական արձանագրուած, 25 տարին լրացրած բոլոր արու անձերը, բացի նրանցից որոնք՝ ա) հոգևոր իշխանութեան օրինական դատաստանով զրկուած են այդ իրաւունքից, բ) Պետութեան օրէնքների զօրութեամբ և դատաստանով քրէական յանցանքների համար բոլորովին կամ մասամբ զրկուած են իրաւունքներից։

5. Թեմի քաղաքների ծխական եկեղեցիները թեմական պատգամաւոր ընտրում են իւրաքանչիւրն իւր ծխական ժողովով։

6. Թեմի գիւղական ծխական եկեղեցիները թեմական պատգամաւոր ընտրում են իրենց պատուիրակների միջոցով՝ գործակալական ժողովով (յօդ. 7, 9)։

7. Գործակալական ժողովները կազմուում են իրենց շրջանի ծխական եկեղեցիների ընտրած պատուիրակներից։ (Իւրաքանչիւր ծխական եկեղեցի ուղարկում է առնուազն մի պատուիրակ, իսկ բազմածուխ համայնքներն իրենց իւրաքանչիւր 100 տան համար մի-մի պատուիրակ են ուղարկում (վերջին հարիւրը կարող է լրիւ չլինել, բայց 51-ից ոչ պակաս)։ Պատուիրակներին ընտրում են ծխական ժողովները։

Ծանօթութիւն. պատուիրակներ ընտրելիս գիւղական ծխական ժողովները պէտք է նաև անձնավոխանորդներ ընտրեն նոյն քառամեակի համար։

8. Պատուիրակներն ընտրուում են չորս տարի ժամանակով։ Հին պատուիրակների լիազօրութիւնը շարունակուում է մինչև նոր պատուիրակների ընտրուելը և պաշտօնի ձեռնարկելը։

9. Գործակալական ժողովի գումարման տեղն ու ժամանակը (որ կիրակի օր պիտի լինի) որոշում է թեմական խորհուրդը (3-րդ յօդ.) և գործակալների միջոցով առնուազն երկու ամիս առաջ հաղորդում է այդ իւրաքանչիւր շրջանի բոլոր գիւղական ծխական եկեղեցիներին, հրաւիրելով ծխական ժողով կազմելու և հարկաւոր թուով (յօդ. 7) պատուիրակ ընտրելու՝ գործակալական ժողովին մասնակից լինելու և այնտեղ թեմական պատգամաւոր ընտրելու համար։ Պատուիրակները պարտաւոր են հաւաքուել որոշուած օրն ու տեղը։ Գործակալական ժողովը կանոնաւոր է համարուում, որչափ

էլ լինի հաւաքուած պատուիրակների թիւը։ Գործակալը ստուգում է ներկայ գտնուող պատուիրակների լիազօրութեան վկայականները (յօդ. 13) և ձեռնարկում է ատենապետի և քարտուղարի ընտրութեանը, որից յետոյ պարտաւոր է ներկայ գտնուել իբրև նախագահ և պաշտօնական ներկայացուցիչ ծխական հոգևոր իշխանութեան և նիստի վերջը ստորագրել ժողովի արձանագրութեան տակ, վկայելով, որ ժողովը իրօք տեղի է ունեցել արձանագրուածի և սոյն կանոնների համեմատ։

10. Թէ ծխական և թէ գործակալական ժողովների այս ընտրութիւնները կատարւում են ներկայ եղող ժողովականների ձայների կիսից աւելով։ Եթէ առաջին անգամ ձայների այսպիսի թիւ չհաւաքուի ոչ մի թեկնածուի համար, անմիջապէս երկրորդ անգամ ընտրութիւն է կատարւում, և ընտրուած է համարւում ամենաշատ քուէ ստացող թեկնածուն, որքան էլ որ լինի նրա ստացած ձայների թիւը։

11. Ժողովները կարող են պատուիրակ և պատգամաւոր ընտրել թէ իրենց միջից և թէ առհասարակ նոյն թեմի իրաւասու թեմականներից։

12. Պատուիրակների և պատգամաւորների ընտրութեան ծխական և գործակալական ժողովների արձանագրութիւնները և դրանց վերաբերեալ բողոքները ուղարկւում են թեմական Առաջնորդին իբրև նախագահի (յօդ. 3.) թեմական խորհրդի։ Թեմական խորհուրդը հաւաքելով և ստուգելով հարկաւոր տեղեկութիւնները, իւր կարծիքի հետ միասին զեկուցանում է թեմական պատգամաւորական ժողովին ի վերջնական անօրէնութիւն։

13. Իւրաքանչիւր պատուիրակ և պատգամաւոր պէտք է ունենայ իրեն ընտրող ժողովի նախագահից և քարտուղարից վաւերացուած մի վկայական իւր լիազօրութիւնը հաստատող։ Առանց այդպիսի վկայականի նա չէ կարող օգտուել իւր լիազօրութիւնից։

14. Նախքան քառամեակի լրանալը, եթէ որ և է պատգամաւոր մեռնի, հրաժարուի կամ որ և է պատճառով պատգամաւորութիւնից հեռանայ, քաղաքներում համապատասխան ծխական եկեղեցին նոր պատգամաւոր է ընտրում, իսկ գործակալութիւններում հրաւիրւում է պատգամաւորին փոխարինելու նրա անձնափոխանորդը (յօդ. 9), իսկ սրա որևիցէ պատճառով չլինելու կամ հեռանալու դէպքում՝ գործակալութեան պատուիրակների ժողովէ հրաւիրւում նոր պատգամաւոր և անձնափոխանորդ ընտրելու համար։

Այս լրացուցիչ ընտրութեան պատճառով թեմական ժողովի նիստերը չեն յետաձգւում։

Այս լրացուցիչ ընտրութեամբ պատգամաւորները լիազօրութիւն են ստանում միայն նոյն քառամեակի ժամանակաշրջանում։

15. Թեմական ժողովի պատգամաւորական

կազմի թէ ամբողջական և թէ մասնակի ընտրութիւնները թեմ. Առաջնորդը իւրաքանչիւր անգամ յատուկ տեղեկագրով զեկուցանում է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին, որ Հայրապետական Կոնդակով օրհնում է։

16. Պատուիրակներ և պատգամաւոր ընտրելիս ծխական ժողովները զեկավարւում են «Ծխական կանոնագրութեամբ»։

Բ. ՊԱՐՏՔ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔ.

17. Թեմական ժողովը գումարւում է ամեն տարի մէկ անգամ թեմական Առաջնորդի հրաւէրով։ Գումարման ժամանակն որոշում է Թեմական Խորհուրդը։ Առաջնորդը նախապէս յայտնում է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին թեմական ժողովի գումարման ժամանակը և օրակարգը և ապա առնուազն մէկ ամիս առաջ տեղեկացնում է պատգամաւորներին յատուկ տպագրած հրաւիրագրով, որի մէջ նշանակուած պիտի լինի ժողովի օրակարգը։

18. Նշանակուած օրը կէսօրին թեմ. Առաջնորդը բաց է անում թեմական ժողովի նստաշրջանը և առաջարկում է ընտրել ժողովի տեղապետ և քարտուղար։

19. Թեմական ժողովի նախագահն է թեմական Առաջնորդը, իսկ ժողովի նիստերը կառավարում է առանձին Ատենապետ, որին ժողովը ընտրում է նոյն նստաշրջանի համար։ Նախագահը՝ իբրև

թեմի Առաջնորդ և պատասխանատու՝ պարտաւոր է յիշեցնել օրակարգը և թոյլ չտալ շեղումներ։

20. Թեմական Խորհրդի և թեմական դպրանոցի Հոգաբարձութեան ներկայացուցիչները, թեմական դպրանոցի տեսուչը և թեմական տեսուչները ներկայ են լինում թեմ. ժողովի՝ իրենց գործունէութեան շրջանին վերաբերող գործերին նուիրուած նիստերին՝ հարկաւոր տեղեկութիւններ տալու համար։

21. Թեմական ժողովը ա) Ընտրում է՝ թեմի համար Առաջնորդ (եթէ տեղը թափուր է) 22-րդ յօդուածում որոշուած եղանակով։ Ընտրում է և Թեմական Խորհրդի անդամներ, թեմական դպրանոցի հոգաբարձուներ, թեմական վերատեսուչ յանձնաժողովի անդամներ, այլ և դրանց փոխանդամներ։

բ) Մշակում է թեմական դպրանոցների, եկեղեցական—ծխական դպրոցների, ծխական եկեղեցիների և թեմի մէջ գտնուած վանքերի կալուածների շահագործման եղանակը (նախագծեր) և յատուկ տեղեկագրով ներկայացնում է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին ի անօրէնութիւն։

գ) Քննում և հաստատում է թեմական խորհրդի և թեմական դպրանոցի հոգաբարձութեան հաշիւները, տեղեկագրերն ու զեկուցումները։

դ) Քննում է Թեմական Խորհրդի նախահա-

ՀԻՒԸ (օրինակ թեմական տեսուչներ պահելու ծախսը և նմաններ) և ներկայացնում է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին ի հաստատութիւն։

Ե) Քննում է Թեմական Առաջնորդի, Թեմական Խորհրդի և Թեմական Դպրանոցի հոգաբարձութեան դէմ ծագած ծանր բողոքները և ներկայացնում է իւր զեկուցագրով ու արձանագրութիւններով Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին ի տնօրէնութիւն։

22. Թեմական Առաջնորդի ընտրութիւնը կատարւում է թեմական պատգամաւորների ընդհանուր թուի $^2/_3$-ի ներկայութեամբ և ձայների բացարձակ մեծամասնութեամբ։ Թեմական Առաջնորդ ընտրելիս թեմ. ժողովը նախ առնուազն չորս ընտրելիների ցանկ է կազմում և հաղորդում Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին։ Ապա երկու թեկնածուի ընտրութիւն է անում միմիայն նրանց միջից, որոնց անունները չեն ջնջուած Վեհ. Կաթուղիկոսի կողմից։ Ընտրութեան արձանագրութիւնը, ներկայ եղող պատգամաւորների մեծամասնութեան կողմից ստորագրուած, թեմ. ժողովը ներկայացնում է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին օրինական ընթացք տալու համար։

23. Թեմական ժողովի որոշումները լինում են ներկայ եղող պատգամաւորների ձայների բացարձակ մեծամասնութեամբ։ Ժողովի արձանագրութիւնները վաւերական են, երբ ստորագրուած են ներկայ եղող պատգամաւորների մեծամասնութեան կողմից։

24. Թեմական ժողովը իւր արձանագրութիւններն ու զեկուցագիրն ներկայացնում է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին Առաջնորդի կամ նրա պաշտօնակատարի միջոցով։ Առաջնորդը պարտաւոր է թեմական ժողովի այդ թղթերը յընթացս մի եօթնեկի ուղարկել Վեհափառ Կաթուղիկոսին, տեղեկացնելով այդ մասին թեմական ժողովի Ատենապետին։

մեկին մի գրկեր բերդ՝ սեռատարածութիւն
ունեցողներուն վրայի։

24. Թիւրիմաց զորքի իր սպասարար-
ներուն ու զինուորներուն տրուելու է
Ամենայն հայոց Վեհափառ Կաթողի-
կոսի կամ նոյն տեղապահի կիրակով,
Առաջնորդ տեղուոյն է Թիւրիմաց զորքի
ոչ միայն տեղուոյն, այլ նաև ամենայն
Թիւրիմաց զորքի Ամենայնի։

«Ազգային գրադարան»
NL0243374